ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«05» դեկտեմբերի 2019թ.

ՀՀ Լոռու
մարզպետարան
մարզպետ Ա.Ղուկասյանին

N131

Հարգելի պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Շենավան համայնքի ավագանու թիվ 27-Ա,թիվ 28-Ա,թիվ 29-Ա,թիվ 30-Ն,թիվ 31-Ն որոշումները:

Առդիր14/տասչորս/ թերթ:

Համայնքի ղեկավար Մ.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավանի համայնքապետարան, գ.Շենավան
հեռ. 077-57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 27-Ա

05 դեկտեմբերի 2019 թվական

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 05-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Շենավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Շենավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 05-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան գյուղական համայնքում 2020թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին:

3.ՀՀ Լոռու մարզի Շենավանի համայնքապետարանում 2019թվականի նոյեմբերի 27-ից նոյեմբերի 29-ը անցկացված գույքագրման արդյունքները հաստատելու մասին:

4.Շենավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18 <<Շենավան համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 24-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մովսիսյան Գագիկ			
Դունամալյան Իվան			
Կարապետյան Ստյոպա			
Միրզոյան Հրայր			
Կարապետյան Պարույր			

Շենավան համայնքի ղեկավար Մ.Մխիթարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավան համայնք, հասցե գ Շենավան ,
հեռ. 077-57-07-57 էլ. փոստ՝ shenavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» դեկտեմբերի 2019 թվական, 28 -Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 30 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 11-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Շենավան համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ՝	Դեմ՝/0/	Ձեռնպահ՝/0/
Կարապետյան Ստյոպա			
Կարապետյան Պարույր			
Մովսիսյան Գագիկ			
Դունամալյան Իվան			
Միրզոյան Հրայր			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.Մխիթարյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Շենավան համայնքի ավագանու
2019 թվականի դեկտեմբերի **05--ի N 28-Ա որոշման**

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Նալբանդյան Արփինե Ռոբերտի՝10.000/տաս հազար/դրամ,երեխայի ծնունդ

2. Դունամալյան Արտաշ Վարդանի՝20.000 /քսան հազար/դրամ,հուղարկավորության ծախս

Ընդամենը 30.000/երեսուն հազար/ դրամ:

Շենավանի
համայնքապետարանի աշխատակազմի ղեկավար Ն.Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավան համայնք, հասցե գ Շենավան ,
հեռ. 077-57-07-57 էլ. փոստ՝ shenavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» դեկտեմբերի 2019 թվական, 29 -Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ը ԱՆՑԿԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման մասին» օրենքի 18 - րդ հոդվածի 1 - ին կետի 32) ենթակետով Շենավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Լոռու մարզի Շենավանի համայնքապետարանում 2019 թվականի նոյեմբերի 27-ից նոյեմբերի 29-ը անցկացված գույքագրման արդյունքները:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ՝	Դեմ՝/0/	Ձեռնպահ՝/0/
Կարապետյան Ստյոպա			
Կարապետյան Պարույր			
Մովսիսյան Գագիկ			
Դունամալյան Իվան			
Միրզոյան Հրայր			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.Մխիթարյան

ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ

ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿ N

«29» նոյեմբերի 2019 թ.

ՍՏԱՑԱԿԱՆ

Գույքագրման անցկացման սկզբում բոլոր ապրանքանյութական արժեքների մուտքային և ելքային փաստաթղթերը հանձնված են հաշվապահություն, բոլոր ստացված ապրանքանյութական արժեքները մուտքագրված են և բոլոր դուրս գրված ապրանքանյութական արժեքները ելք են արված:

Նյութական պատասխանատու անձ

համայնքի ղեկավար (պաշտոնը) Միքայելյան Միքայել (ազգանուն, անուն) (ստորագրություն)

(պաշտոնը) (ազգանուն, անուն) (ստորագրություն)

Գույքագրումը սկսվել է

«27» նոյեմբերի 2019 թ.

Գույքագրումը վերջացել է

«29» նոյեմբերի 2019 թ.

			Ստուգման պահին փաստացի առկա է		
հ/հ	Ապրանքանյութական արժեքների անվանումը	Գույքագրման համարը	Քանակը	Գինը	Գումարը
1	Համակ բրդապակուն		1 հատ	300 795	300 795
2	Համակ բրդապակուն		1 հատ	300 795	300 795
3	Համակ բրդապակուն		1 հատ	300 795	300 795
4	Հրուկտոր S-80		1 հատ	9640	9640
5	Գրասեղան		2 հատ	35.000	70.000
6	Գրիչ		395 հատ	53	20.935
7	Սրբիչի կախիչ		2 հատ	2650	5300
8	Մեխակ		5 հատ	349	1745
9	Խաղալիքների դարակ		2 հատ	2050	4100
10	Մեխակ		5 հատ	349	1745
11	Մեխակ		5 հատ	184	920
12	Մեխակ		5 հատ	184	920
13	Մոնիտոր Տեսահսկող		4 հատ	18302	73 208
14	Մոնիտոր Տեսահսկող		3 հատ	3051	9193
15	Վառելիքային ստոռոժ		15 հատ	800	12 000
16	Գլուխ		5 հատ	258	1290
17	Խմելու ջրի գրաֆին		Փ 100		
18	Խմելու ջրի գրաֆին		Փ 150		
19	Խմելու ջրի հավաքվածություն		Փ 150		
20	Ռոզետան ջրի գրաֆին կիսաթաղանթով		130 գ/մ		
21	Ռոզետան ջրի գրաֆին հավաքվածքով		500 գ/մ		
22	Ռոզետան ջրի մետաղե խցան		1000 /		
23	Հատակ բաժանմունքի կիսակոտրոց		1 հատ		
24	Վառելիքապահարանի շերտ		1 հատ	1.543.000	1.543.000
25	Գլուխ		5 հատ	258	1290
26	Հոր սեղան		10 հատ	349	3490
27	Հորի շրջանակ		2 հատ		
28	Հոգոտիկ		Փ 530		
29	Դուշակների հելոգ		1 հատ		
30	Հանձնարարագիր		1 հատ	240.000	240.000
31	Տրիկոտեր		1 հատ	100.000	100.000
32	Մանվածագործիք		1 հատ	42.000	42.000
33	Արոտեր		Հոնորարներ	100.000	100.000
34	Հաղորդման շերտ		1 հատ		
35	Խմելու ջրի պոլիէթիլենային խողովակաշար		Փ 100	1.900.800	1900.800
36	Խմելու ջրի պոլիէթիլենային խողովակաշար		Փ 100	172.000	172.000
37	Խմելու ջրի մետաղե խողովակ		105³		
38	Խմելու ջրի հավաքվածություն		1000L		
39	Աշխատանք		10 հատ	50.000	500000
40	Աշխատանք		3 հատ	33.000	99.000

Փաստացի քանակների ընդհանուրը ______________________

(տառերով)

____

Փաստացի գումարների ընդհանուրը ______________________

(տառերով)

Հանձնաժողովի նախագահ՝

Միքայելյան Միքայել ______________________

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

Հանձնաժողովի անդամներ՝

______________________ ______________________

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

______________________ ______________________

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

______________________ ______________________

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

______________________ ______________________

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

Նյութական պատասխանատու անձ՝

______________________ ______________________

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

«____» ______________ թ.

Միքայելյան Միքայել ______________________

(ազգանուն, անուն) (ստորագրություն)

06800851

«23» 11 2018 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավան համայնք, հասցե գ.Շենավան
հեռ՝. /077/57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» դեկտեմբերի 2019 թվականի N 30 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ,10-րդ,11-րդ,12-րդ,13-րդ և 14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով

Շենավան համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան գյուղական համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մովսիսյան Գագիկ			
Դունամալյան Իվան			
Կարապետյան Ստյոպա			
Միրզոյան Հրայր			
Կարապետյան Պարույր			

Շենավան համայնքի ղեկավար Մխիթար Մխիթարյան

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավան համայնքի ավագանու
2019թվականի դեկտեմբերի 05 -ի թիվ 30 -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **4500/չորս հազար հինգ հարյուր/դրամ**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **9000/ինը հազար/դրամ**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000/տասնհինգ հազար/դրամ**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15000/տասնհինգ հազար/դրամ**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **30000/երեսուն հազար/դրամ**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1000/հազար/դրամ
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **2000/երկու հազար/դրամ**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **1000/հազար/դրամ**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **2000/երկու հազար /դրամ**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 70000/յոթանասուն հազար/դրամ

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 18000/տասնութ հազար/դրամ

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար` օրացուցային տարվա համար` 15000/տասնհինգ հազար/դրամ

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար`

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 3001/երեք հազար մեկ/ դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 3001/երեք հազար մեկ/դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 3901 /երեք հազար ինը հարյուր մեկ/դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 6001/վեց հազար մեկ/ դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 7501/յոթ հազար հինգ հարյուր մեկ/դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 13501/տասներեք հազար հինգ հարյուր մեկ/ դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` յուրաքանչյուր եռամսյակի համար`

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 3001/երեք հազար մեկ/ դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 3001 /երեք հազար մեկ/ դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 3901/երեք հազար ինը հարյուր մեկ/ դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 6001/վեց հաղար մեկ/ դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում`7501/յոթ հազար մեկ / դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` 13501/տասներեք հազար հինգ հարյուր մեկ/ դրամ

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար` յուրաքանչյուր օրվա համար` 915/ինը հարյուր տասնհինգ/դրամ` մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին), ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 1500/հազար հինգ հարյուր/դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 7500/յոթ հազար հինգ հարյուր/դրամ

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 60000/վաթսուն հազար/դրամ

դ. խաղատների համար՝ 150000/հարյուր հիսուն հազար/դրամ

ե. շահումով խաղերի համար՝ 75000/յոթանասունհինգ հազար/դրամ

զ. վիճակախաղերի համար՝30000/երեսուն հազար/դրամ

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1501/հազար հինգ հարյուր մեկ/դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1501/հազար հինգ հարյուր մեկ/դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝3001/երեք հազար մեկ/դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝4501/չորս հազար հինգ հարյուր մեկ/դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝6001/վեց հազար մեկ/դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9001/ինը հազար մեկ/դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝301/երեք հարյուր մեկ/դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝301դրամ/երեք հարյուր մեկ/դրամ

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝601/վեց հարյուր մեկ/դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր՝ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝1201/հազար երկու հարյուր մեկ/դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝2401/երկու հազար չորս հարյուր մեկ/դրամ

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4501/չորս հազար հինգ հարյուր մեկ/դրամ

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝800/ութ հարյուր/դրամ

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝1050/հազար հիսուն/ դրամ

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ 550/հինգ հարյուր հիսուն/դրամ

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 30000/երեսուն հազար/դրամ

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 3000/երեք հազար/դրամ

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000/հարյուր հիսուն հազար/դրամ

10) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **1500000/մեկ միլիոն հինգ հարյուր հազար/դրամ**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2100000/երկու միլիոն հարյուր հազար/դրամ**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **3000000/երեք միլիոն/**

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 50 դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 25 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 900 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝

ա. ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 120 դրամ, կամ

բ. ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ 25 դրամ.

2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ա. ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 900 դրամ, կամ

բ. ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 3000 դրամ:

9) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.
10) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ 300/երեք հարյուր/դրամ փոխհատուցման վճար:

11)Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

	Անասնաբուժական ծառայության անվանումը	Գինը /դրամ/
1	Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն	**500**
2	Ծննդօգնություն 1. թեթև միջամտություն 2. ծանր միջամտություն	 **1000** **5000**
3	Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հականասնահամաճարակային միջոցառումների)	Մանր կենդանի **100** Խոշոր կենդանի **200**
4	Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար	**500**
5	Ախտահանություն	1 քառ. մետր **200**
6	Միջատազերծում (դեզինսեկցիա)	1 քառ. մետր **150**
7	Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)	1 քառ. մետր **200**
8	Արհեստական սերմնավորում	**5000**
10	Կենդանու ներծում	մանր կենդանի **1000** խոշոր կենդանի **3000**
11	Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից	Յուրաքանչյուր այցելությունը **1000**
12	Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից	մանր կենդանի **1000** խոշոր կենդանի **2000**
13	Կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2018թ. հուլիս ամիսը)	մանր կենդանի **1000** խոշոր կենդանի **2000**

Աշխատակազմի քարտուղար Ն.Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շենավան համայնք, հասցե գ.Շենավան
հեռ՝. 077-57-07-57

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» դեկտեմբերի 2019 թվականի N 31 -Ն

ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18 -Ի << ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 24 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Շենավան համայնքի ավագանին որոշում է.

1. Շենավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի <<Շենավան համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 24-Ն որոշման մեջ՝ կատարել փոփոխություն

Վարչական բյուջեի 09-04-01-01 դաս. 4729 հոդվածի 40000/քառասուն հազար/դրամ գումարը տեղափոխել՝04-05-01-59 դաս. 4264 հոդվածի վրա:

Վարչական բյուջեի 01-01-01-51 դաս. 4212 հոդվածի, /30000/ երեսուն հազար/դրամ, գումարը տեղափոխել՝01-01-01-51 դաս. 4261 հոդվածի վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Մովսիսյան Գագիկ			
Դունամալյան Իվան			
Կարապետյան Ստյոպա			
Միրզոյան Հրայր			
Կարապետյան Պարույր			

Շենավան համայնքի ղեկավար՝ Մ.Մխիթարյան